«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը

Դաստիարակ՝

Մանկապարտեզ՝ « » ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……..……..……3
Տեսական ուսումնասիրություն……...…..……..……5
Գործնական համատեքստ…….....…..……..……11
Եզրակացություն……....…..……14
Գրականության ցանկ……..…….....……15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից կրթական համակարգի կարևոր խնդիրներից և արժեքային կողմնորոշիչներից մեկն է սովորողների մեջ ինքնուրույնության և ստեղծագործական ունակությունների ձևավորումն ու զարգացումը: Այս որակները օգնում են անձին հետագայում ինքնադրսևորվել կյանքի բոլոր բնագավառներում: Սովորողները այս որակների շնորհիվ զարգացնում են իրենց ճանաչողական կարողություններն ու հմտությունները:

Նախադպրոցական տարիքի երեխաների մեջ ինքնուրույնության և նախաձեռնողականության զարգացումը էապես կախված է մեծերից, հարազատներից և ուսուցիչներից, ովքեր շրջապատում են երեխային:

Ինքնուրույնությունը տարրական դասարաններում բավականին մեծ դեր ու նշանակություն ունի:

Մանկավարժների առջև բավականին հստակ պահանջ է դրված, աշակերտների մեջ սերմանել ինքնուրույնությունը, նոր գիտելիքներ ստանալու և դրանք մշակելու ունակությունը, ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու հատկությունը, տարբեր աղբյուրներից ստացված գիտելիքները մշակելու, վերլուծելու և դրանք առանձնահատուկ կերպով կիրառելու ձգտումը:

Կարևոր խնդիր է նաև սովորեցնել երեխաներին ստեղծագործաբար մոտենալ առկա խնդիրներին չվախենալով ուսման մեջ առկա դժվարություններից:

Ինքնուրույնության և ստեղծագործական հմտությունների ձևավորման և զարգացման մեջ հսկայական է ուսուցչի դերը: Երեխաների ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար, դասից դաաս, դասարանից դասարան:

Տվյալ հետազոտական աշխատանքի շրջանակներում ես իմ առջև նպատակ եմ դրել ուսումնասիրել աշակերտների ինքնուրույնության, ստեղծագործականության խթանման գործընթացի առանձնահատկությունները: Այս նպատակի իրացման համար վեր են հանվել և առաջադրվել են հետևյալ կարևոր խնդիրներ.

- Ուսումնասիրել ինքնուրույնության և ստեղծագործականության խթանման հիմնական մանկավարժկան միջոցները
- Պարզել, թե ինչպես են ազդում ստեղծագործական խաղերը աշակերտների ինքնուրույնության և ստեղծագործականության խթանման վրա:

- Առանձնացնել այն խնդիրները և դժվարությունները, որոնք առաջանում են աշակերտների ինքնուրույնության խթանման գործում:
- Առաջարկել ինքնուրույնության և ստեղծագործականության խթանման ժամանակակից միջոցներ և եղանակներ:

Այսպիսով, հավելենք, որ դպրոցում աշակերտների ինքնուրույնության խթանման առաջնային նպատակն է աշկերտի անձի և նրա ստեղծագործական ընդունակությունների զարգացումը: Այս նպատակի իրացմանն անհրաժեշտ է մոտենալ քայլ առ քայլ, կիրառելով տարբեր մանկավարժական միջոցներ, ուսուցման մեթոդներ և այլն: Աշխատանքի առաջին մասում իրականացրել ենք տեսական ուսումնասիրություն, որի ընթացքում համեմատել և համադրել ենք տարբեր մասնագետ – տեսաբանների կարծիքներ: Աշխատանքի երկրորդ մասում կատարել ենք թեմային համապատասխան գործնական աշատանք: Աշխատանքը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, 2 գլխից, եզրակացությունից, գրականության ցանկից:

ՏԵՍԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

1. Ինքնուրույնություն

Ժամանակակից կրթական և դաստիարակչական հաստատությունների համար հասարակության հիմնարար պահանջը մարդու ձևավորումն է, ով կկարողանա ինքնուրույն ստեղծագործաբար լուծել տարբեր խնդիրները, քննադատաբար մտածել, զարգացնել և պաշտպանել իր տեսակետը, իր համոզմունքները, համակարգված և շարունակաբար համալրել և ամրապնդեն իրենց գիտելիքները, կատարելագործել հմտությունները, ինքնուրույնություն, նախաձեռնություն ստեղծագործաբար կիրառել դրանք իրականության մեջ: Երեխաների մոտ գիտելիքների արդյունավետությունը բարձրացնելու, ակտիվացնելու ամենամատչելի և ապացուցված միջոցներից մեկը ինքնուրույն աշխատանքի համապատասխան կազմակերպումն է: Այն բացառիկ տեղ է գրավում ժամանակակից ուսումնական գործընթացում, քանի որ սովորողը գիտելիքներ է ձեռք բերում միայն անհատական ինքնուրույն ուսումնական գործունեության ընթացքում:

Առաջատար մանկավարժները միշտ հավատացել են, որ ուսուցման ընթացքում երեխաները պետք է հնարավորինս ինքնուրույն աշխատեն, իսկ ուսուցիչը պետք է ուղղորդի այս ինքնուրույն աշխատանքը և նյութ տրամադրի դրա համար: Այս ոլորտի մասնագետներն ընդգծում եմ, որ կարևոր է երեխային տրվի գիտելիքի ձեռքբերման կազմակերպման մեթոդ, ուղղորդող թել, ինչը նշանակում է նրանց զինել մտավոր աշխատանքի գիտական կազմակերպման ինքնուրույնություն, նախաձեռնություն ստեղծագործկան հմտություններով և կարողություններով, այսինքն. նպատակ դնելու, դրան հասնելու միջոցներ ընտրելու, աշխատանքը ժամանակին պլանավորելու կարողություն: Համապարփակ և ներդաշնակ անհատականության ձևավորման համար անհրաժեշտ է համակարգված կերպով ներառել այն ինքնուրույն գործունեության մեջ, որը հատուկ տեսակի կրթական առաջադրանքների գործընթացում՝ անկախ աշխատանք, ձեռք է բերում խնդրի որոնման գործունեության բնույթ:

Նախադպրոցական տարիքը, մանկավարժների և հոգեբանների կարծիքով, առավել կարևոր է երեխաների մեջ տարբեր որակների և հատկությունների զարգացման համար, որոնց օգնությամբ նրանք կկարողանան դրսևորել հետագա կյանքում, կենսագործունեության տրբեր ոլորտներում: Այդպիսի որակներից են

ստեղծագործական ակտիվությունը, ինքնուրույնությունը, վստահությունը, պատասխանատվության զգացումը, համառությունը և այլն: Այս տարիքում երեխայի կայացման կարևոր ուղղություններից է ինքնուրույնության զարգացումը, որը մեծապես որոշում է երեխայի հաջող գործունեությունը հետագա կյանքում:

Ինքնուրույնությունը ձևավորվում է աստիճանաբար երեխայի յուրաքանչյուր տարիքային փուլում, ընդ որում յուրաքանչյուր տարիքում այն ունի տարբեր հատկություններ և դրսևորման ձևեր: Միևնույն ժամանակ, յուրաքանչյուր տարիքային փուլում անհրաժեշտ է, որպեսզի երեխաների ինքնուրույնության ձգտումը խրախուսվի մեծերի կողմից համապատասխան չափաբաժիններով և ռացիոնալ կերպով զարգացնելով անհրաժեշտ հմտություններ և կարողություններ երեխաների մեջ:

Ինքնուրույնությունը սերտորեն կապված է այնպիսի հոգեբանական հատկանիշի հետ, ինչպիսին է երեխայի կամքը, որի շրջանակներում երեխան գիտակցված կերպով կարգավորում է սեփական վարքը և գործունեությունը: Վերջիններս, իրենց հերթին, դրսևորում են երեխայի կարողության մեջ՝ հաղթահարել դժվարությունները, որոնք հանդիպում են առաջադրված նպատակին հասնելու ճանապարհին:

Նախադպրոցական տարիքում երեխան սովորաբար ունի դրական տրամադրվածություն շրջապատող իրականության հանդեպ, սիրում է խաղալ և երևակայել: Այս տարիքում երեխան, որպես կանոն, արդեն հակված է սեփական կարծիքը ունենալու, սակայ մեծի հեղինակությունը կարող է մեծ ազդեցություն ունենալ այդ կարծիքի ձևավորման և զարգացման վրա: Այս ամենը անմիջականորեն ազդում է երեխայի և շրջակա իրականության միջև փոխազդեցությունների վրա:

Գիտակցելով, որ ինքնուրույնությունը անձի կարևորագույն բաղդրիչներից մեկն է, բազմաթիվ ժամանակակից գիտնականներ ուշադրությունեն կենտրոնացրել դրա էության ուսումնասիրության վրա: Իսկապես, ինքնուրույնության դաստիարակման խնդիրը ենթադրում է այդ ֆենոմենի հստակ սահմանում և դրա հատկանիշների առանձնացում:

Այսպես, ըստ Ս. Օժեգովի բառարանի, «ինքնուրույն» հասկացությունը ունի մի քանի սահմանումներ[1].

[1] https://slovarozhegova.ru/

> Անկախ, ազատ
> Անկախ գործողություններ և դատողություններ կատարելու ունակություն
> Մյուսներից առանձնացված
> Ինքնուրույն ուժերով կատարվող գործունեություն առանց կողմնակի օգնության և ուղղորդման
> Կողմնակի ազդեցությունից անկախ

Զ. Շինտարը ինքնուրույնության ֆենոմենը սահմանում է , որպես «անկախություն, անձի ձգտում և ունակություն, գործողություններ կատարել առանց շրջապատող անձանց օգնության»[2]:

Դառնալ ինքնուրույն և նախաձեռնող –օբյեկտիվ անհրաժեշտություն է և յուրաքանչյուր երեխայի բնական պահանջ: Սակայն, ինքնուրույն գործելու ունակությունը չի բացառում կողմնակի օգնության հնարավորությունը և, նույնիսկ, ցանկալիությունը:

Ինքնուրույնությունը սահմանվում է ոչ միայն որպես ազատություն արտաքին ազդեցություններից և պարտադրանքներից, այլև որպս «ընդունակություն հակազդել արտաքին ազդեցություններին և վերամշակել դրանք սեփական գիտակցության մեջ»:

Ըստ մանկավարժական հանրագիտարանային բառարանի ինքնուրույնությունը սահմանվում է որպես «անձի առանցքային որակներից մեկը, որն արտահայտվում է կարողության մեջ նպատակներ սահմանել և սեփական ուժերով հասնել դրանց իրականացմանը»:

Միևնույն ժամանակ, ինքնուրույնության տակ ենթադրվում է անձի պատասխանատու վերաբերմունքը սեփական արարքների հանդեպ, ընդունակություն ցանկացած իրահճակում գործել գիտակցված և նախաձեռնողական, կայացնել ոչ ավանդական և ոչ ստանդարտ որոշումներ:

Դ. Էլկոնին դիտարկում է ինքնուրույնությունը, որպես անձի ինտեգրալային հատկություն, որն արտացոլում է անձի կոգնիտիվ և կամային հատկանիշների միասնություն, ստեղծագործական և ակտիվ վերաբերմունք արտաքին աշխարհի հանդեպ:

Առաջատար հոգեբաններ և մանկավարժներ Վ. Դավիդովի, Գ. Ցուկերմանի և այլոց

[2] https://infourok.ru/pedagogicheskie-usloviya-vospitaniya-samostoyatelnosti-uchaschihsya-v-nachalnoy-shkole-3773403.html

կարծիքով երեխայի ինքնուրույնությունը և նախաձեռնողականությունը առաջին հերթին արտահայտվում է կարողության և ընդունակության մեջ ինքնուրույն մտածել, կողմնորոշվել նոր իրավիճակում, ինքնուրույն տեսնել խնդիրը և դրա լուծման ուղիները:

2. Ստեղծագործական ունակություններ

Ստեղծագործական ընդունակությունները հարկավոր է զարգացնել երեխաների մոտ սկսած ամենավաղ տարիքից:

Գոյություն ունի կարծիք, որ ստեղծագործականությունը անձի բնածին հատկությունն է, որոշ երեխաների մոտ այն առկա է, որոշների մոտ ոչ: Սակայն, բազմաթիվ հոգեբանական և մանկավարժական հետազոտությունների արդյունքում պարզ է դարձել, որ բնածին կարող են լինել միայն ստեղծագործականության հակումները: Որպեսզի դրանք դառնան ստեղծագործական մոտեցումներ և ճկուն միտք, այդ հակումները պետք է մշտապես զարգացնել:

Տվյալ խնդրի շուրջ առկա որոշ գրական աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ստեղծագործականության խնդիրը տարբեր կերպ է մեկնաբանվում տարբեր հեղինակների, մասնագետների կողմից: Այսպես օրինակ, Ե. Տունիկը, ով զբաղվել է Է. Տրրնսի գիտական հայացքների խորին ուսումնասիրմամբ, ըստ վերջինիս հայեցակարգի մեկնաբանում է ստեղծագործականությունը, որպես անձի ընդունակություն, որը մշտապես գտնվում է զարգացման գործընթացում և կախված է բազմաթիվ ներքին և արտաքին պայմաններից, գործոններից[3]:

Հեղինակն առանձնացնում է ստեղծագործականության հետևյալ չափանիշները.

- Մտքի սահունություն
- Մտքի ճկունություն
- Մտքի օրիգինալություն /յուրօրինակություն
- Մտքի մշակվածություն

Ն. Լեյտեսը նշում էր, որ ստեղծագործականությունը հզոր գործոն է հանդիսանում անձի զարգացման գործընթացում, որով բնութագրվում է տվյալ անձի պատրաստակամությունը փոխելու, հրաժարվելու կարծրատիպերից, ազդելու շրջակա իրականության վրա:

[3] https://4brain.ru/D0%B0%D1%82%D0%B8%D0%B2%D0%BD%D0%BE°/oDr/o8r/oDr/o82°/oD0°/oB8/

Այսպիսով, ստեղծագործականությունը սահմանվում է, որպես անձի ընդունակություն ծնելու նոր գաղափարներ գործունեության այս կամ այն ոլորտում, որոնք կնպաստեն առաջադրված խնդիրների էլ ավելի արդյունավետ լուծմանը: Այս ընդունակությունը կարող է արտահայտվել ածի մտածողության, ընկալման, երևակայության, էմոցիաների, ինչպես նաև իր գործունեության արդյունքների մեջ:

Հայտնի են նաև ստեղծագործականության և ինքնուրույնության որոշ տարիքային առանձնահատկություններ: Այսպես, օրինակ, Ա. Բելոուսովան կարծում է, որ վաղ մանկական տարիքում ստեղծագործականությն խթանման վրա մեծապես ազդում են էմոցիաները:

Սակայն ստեղծագործական գործընթացի կարգավորման զգացմունքային, էմոցիոնալ հիմքի առկայությունը դեռևս չի սպառում այս ֆենոմենի զարգացման մեխանիզմը երեխաների մոտ: Գոյություն ունեն նոր գաղափարների ստեղծման նաև այլ տեխնոլոգիաներ: Օրինակ, զարգացնող ուսումնառության հայեցակարգում Ստեղծագործական գործընթացը կապվում է տեսական մտածողության հետ:

Այսպիսով, ստեղծագործականությունը երեխայի ներքին ակտիվությունն է, որը կապված է նրա հետաքրքրությունների, բնավորության և անձի առանձնահատկությունների, մտածողության առանձնահատկությունների հետ:

Շատ հետազոտողներ, փնտրելով ստեղծագործական աշխատանքի բովանդակության ներքին կողմն ավելի լավ արտացոլելու հնարավորություններ, սկսեցին կենտրոնանալ արդյունավետ և ստեղծագործական սկզբունքների հետևողական աճի վրա ինչպես անկախ գործունեության, այնպես էլ այն առաջադրանքների վրա, որոնք նախագծում են այս գործունեությունը և արտացոլում են մակարդակի փոփոխությունները, երեխաների մտածելակերպը:

Հմտությունների ձևավորման և դրանց ուժեղ համախմբման համար անհրաժեշտ է ինքնուրույն աշխատանք ըստ մոդելի: Դրանք հիմք են հանդիսանում սանի իսկապես ինքնուրույն գործունեության համար: Վերականգնողական ստեղծագործական աշխատանքը սովորեցնում է վերլուծել իրադարձությունները, երևույթները, փաստերը, ձևավորել ճանաչողական գործունեության տեխնիկա և մեթոդներ, նպաստում է ճանաչողության ներքին շարժառիթների զարգացմանը, պայմաններ է ստեղծում երեխաների մտավոր գործունեության զարգացման համար: Այս տեսակի ինքնուրույն

աշխատանքները հիմք են հանդիսանում սանի հետագա ստեղծագործական գործունեության համար: Փոփոխական անկախ աշխատանքը ձևավորում է հայտնի նմուշից դուրս պատասխան գտնելու հմտություններ և կարողություններ: Նոր լուծումների մշտական որոնումը, ձեռք բերված գիտելիքների ընդհանրացումն ու համակարգումը, դրանց տեղափոխումը լիովին ոչ ստանդարտ իրավիճակներ երեխայի գիտելիքները դարձնում են ավելի ճկուն, ձևավորում ստեղծագործ անհատականություն:

Ստեղծագործական անկախ աշխատանքը սաների ինքնուրույն գործունեության համակարգի ամենամեծ ձեռքբերումն է: Այս աշխատանքները համախմբում են գիտելիքների ինքնուրույն որոնման հմտությունները, ինքնուրույնությունը, նախաձեռնությունը, ստեղծագործական անհատականություն ձևավորելու ամենաարդյունավետ միջոցներից են: Այսպիսով, տարբեր տեսակի ինքնուրույն աշխատանքի գործնական կիրառումը նպաստում է ինքնուրույն աշխատելու ունակության բարելավմանը և երեխայի ինքնուրույնության զարգացմանը: Այնուամենայնիվ, ցանկացած աշխատանք պետք է սկսվի սաների գործողությունների նպատակի և գործողությունների մեթոդների գիտակցումից:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Դիտարկենք մի քանի ցուցադրական պարապմունքի օրինակ, որտեղ օգտվել եմ փոխներգործուն մեթոդներից՝ թույլ տալով, որ երեխաներն աշխատեն թիմերով:

Նմանօրինակ մեթոդներ հաճախակի եմ կիրառում իմ մանկավարժական գործունեության ընթացքում՝ նպատակ ունենալով զարգացնել սաների ստեղծագործական ունակությունները, ինքնուրույնությունն ու նախաձեռնողականությունը: Հավելեմ նաև, որ սույն ցուցադրական դասին ներկա են եղել նաև նախադպրոցական հաստատության տնօրենն ու դաստիարակի օգնականը: Վերջիններիս կարծիքով դասն արդյունավետ էր այնքանով, որ բոլոր սաները ցուցաբերում էին ակտիվ մասնակցություն, դրսևորում նախաձեռնողականություն և հնարավորին չափ ինքնուրույնություն: Տնօրենը նաև ընդգծեց, որ բավականին լավ արդյունք է, որ նկատվում էր սաների համաչափ մասնակցություն, որևէ երեխա պասիվ ու ստվերված չէր:

Գործնական պարապմունք «ԽԻԿ» համակարգի կիրառությամբ

Թեմա՝ «Կարմիր գլխարկը հեքիաթի ընթերցումը»

Նպատակները՝

- ✓ Սաներին փոխանցել հեքիաթի բովանդակությունը, տալ գաղափար չարի ու բարու մասին, բացատրել հեքիաթում առկա անծանոթ բառերը:
- ✓ Սաների մոտ առաջացնել հետաքրքրություն հեքիաթներ ունկնդրելու նկատմամբ:
- ✓ Գործնական աշխատանքի օգնությամբ ձևավորել թիմում աշխատելու հմտություն:
- ✓ Դաստիարակել հարգանք մեծերի նկատմամբ:
- ✓ Զարգացնել մանր մոտորիկան, նկարելու, ծեփելու ունակությունները:
- ✓ Խթանել երևակայությունը, ինքնուրույնությունն ու նախաձեռնությունը:
- ✓ Նպաստել սովորողների ստեղծագործական մտածողության զարգացմանը:

Աշխատանքի ընթացքը

Խթանման փուլ: Այս փուլում ընթերցել «Կարմիր գլխարկ» հեքիաթը՝ կիրառելով ստեղծագործական մտածողությունն ու երևակայությունը զարգացնող մի հնար: Հեքիաթի դադարներով ընթերցումը բավականին հետաքրքիր հնար է նախադպրոցականի հետաքրքրությունն ակտիվացնելու, նրան մտածել սովորեցնելու

տեսանկյունից: Հնչում է հարցը՝ ի՞նչ ես կարծում, ի՞նչ կլինի հետո: Երեխան սկսում է ստեղծագործել, երևակայել, հորինել, իսկ արդյունքում զարգանում է նրա ստեղծագործական մտածողությունը: Երբ երեխան սկսում է հեքիաթը պատմել իր տարբերակով, ապա պետք չէ նրան ուղղել: Այսպես, նախադպրոցականի բառային պաշարն է զարգանում, նա սկսում է երևակայական հերոսներ հորինել: Այս եղանակով հեքիաթի ընթերցումից հետո կարելի է կազմակերպել խմբային քննարկում: Քննարկումն ակտիվացնել հուշող, ուղղորդող հարցադրումների միջոցով: Հարցադրումների օրինակներ՝

- Ինչու Կարմիր գշխարկը հավատաց գայլին:
- Գայլը արդյոք ագահ էր ու չար:
- Ըստ քեզ՝ աշխարհի բոլոր գայլերն են չար:
- Ով էր հեքիաթի ամենամիամիտ հերոսը:
- Իսկ դու օգնում ես տատիկիդ:

Իմաստի ընկալման փուլ: Գրատախտակին փակցնել հեքիաթի 3 հերոսներին և երեխաներին բաժանել 3 խմբի, որոնցից յուրաքանչյուրին տալ 5 րոպե ժամանակ հերոսներին հատկանշավորելու համար: Հաջորդիվ խմբերը կներկայացնեն իրենց տեսակետները:

Նկար 1

Նկար 2

Նկար 3

Այդ ընթացքում հետևել սաների խոքին, հարկ եղած դեպքում ուղղելով ու շտկելով նրանց: Հաջորդիվ, հոգնածությունը լարվածությունը թոթափելու համար փոքրիկները կպարեն «Песенка Красной Шапочки» երգի ներքո, իսկ ընթացքում մոնիտորի վրա ցուցադրել նախօրոք պատրաստած տեսասահիկը՝ հեքիաթի գլխավոր հերոսների նկարներով:

Կշռադատման փուլ: Այս հատվածում կրկին փոքրիմներին բաժանել 3 խմբի՝ տալով առաջադրանքներ

Առաջադրանքի օրինակներ

Խումբ 1 Պատրաստել խմբային նկար «Կարմիր գլխարկը» հեքիաթի շուրջ:

Խումբ 2 Պատրաստել ապլիկացիա «Կարմիր գլխարկը» հեքիաթի շուրջ:

Խումբ 3 Ծեփել «Կարմիր գլխարկը» հեքիաթի հերոսներին:

Աշխատանքները հավաքվել և խմբասենյակի մի անկյունում ցուցադրել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աշխատության թեման անսպառ ուսումնասիրության և վերլուծության երկարատև աշխատանք է պահանջում: Սակայն մի բան հստակ է, եթե մենք նպատակ ենք դնում զարգացնել նախադպրոցականի խոսքը, ինքնուրույնությունն ու նախաձեռնողականությունը, ապա անհրաժեշտ է հաշվի առնել, որ որոշակի կոնկրետ

գոտում նա ունի իր հետաքրքրությունները, առանձնահատկությունները: Երեխայի այդ պահանջմունքները բավարարելու համար դաստիարակը պետք է կուտակի նորանոր հմտություններ ու կարողություններ, որպեսզի արդյունավետ աշխատանք տանի: Դաստիարակի և երեխայի շփման մակարդակը, երեխայի վիճակն իմանալը այդ պահին խիստ կարևոր է: Դաստիարակը պետք է երեխաների շփման համար ստեղծի հարմարավետ պայմաններ, որպեսզի նրանք մեծանան նախաձեռնող, մտածող, ստեղծագործող և ինքնուրույն:

Բարոյահոգեբանական կայուն մթնոլորտը թույլ կտա, որ երեխան ժամանակի ընթացքում ինտեգրվի հասարակություն ու նախաձեռնողի դերում լինի, ցանկանա սովորել ու իր սովորածը կիրառել նախադպրոցական հաստատությունից դուրս: Դաստիարակը զանազան մեթոդների կիրառությամբ պետք է փորձի հարստացնել նախադպրոցականի բառային պաշարը: Զբոսանքի, խաղի կամ ուսումնական պարապունքների ժամանակ հարկավոր է անդադար զրուցել նրա հետ, լսել նրա մտահոգությունները, պարզաբանել այս կամ այն երևույթի մասին նրամ հուզող հարցերը: Այսպիսով, դաստիարակը հիմք է նախապատրաստում, որ առաջիկայում նախադպրոցականն ունենա առաջընթաց ու կարողանա ձևավորել կապակցված խոսք, լինի ավելի ինքնուրույն ու կազմակերպված:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Թորոսյան Կ., Չիբուխչյան Կ., Մանուկյան Մ., Մեթոդական աշխատանքը դպրոցում, ձեռնարկ, «Զանգակ» հրատարակչություն, 2014:
2. Белоысов А.К. //Психология общения, 2015.
3. Туник Е.Е, Диагностика креативности.

4. https://lib.armedu.am/
5. https://usum.am/